ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 5-ին՝ կիրակի.— *Բուն Բարեկենդան. Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը, և Վեհափառ Հայրապետը քարոզեց «Ահաւասիկ Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի» բնաբանով։*

***

Փետրվարի 8-ին՝ չորեքշաբթի.— *Մայր տաճարում սկսվեցին Մեծ պահոց հատուկ արևագալի, ճաշու, խաղաղականի և հսկման արարողությունները։*

Այսօր Վեհափառ Հայրապետը նախագահեց Մայր տաճարում արևագալի առաջին հանդիսավոր ժամերգության։

***

Փետրվարի 10-ին՝ ուրբաթ.— *Երեկոյան ժամը 6-ին, վեհարանում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը։*

***

Փետրվարի 12-ին՝ Արտաքսման կիրակի.— *Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հակոբ քահ. Հակոբյանը։ Քարոզեց գեր. տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը՝ «Քննեցեք զանձինս ձեր, եթէ կայցեք ի հաւատս ձեր» բնաբանով։*

Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Փետրվարի 13-ին՝ երկուշաբթի.— *Երեկոյան ժամը 5-ին Մայր տաճարում կատարվեց Տեառնդառաջի նախատոնակը՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի։*

Երեկոյան ժամը 7-ին՝ վեհարանի բակում, պատրաստվել էր Տեառնդառաջի ավանդական խարույկը։ Վեհափառ Հայրապետը, շրջապատված Մայր Աթոռի միաբաններով, հոգևոր ճեմարանի դասախոսներով և ուսանողներով, կրակ տվեց խարույկին՝ ընդհանուր ուրախության մեջ։ Այնուհետև ուսանողները երգեցին և ուրախացան խարույկի շուրջը։

Ժամը 9-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճեց թեյի սեղանի շուրջ համախմբել Մայր Աթոռի միաբաններին և ճեմարանի դասախոսներին։

***

Փետրվարի 14-ին՝ երեքշաբթի.— *Տեառնդառաջ. Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հովհաննես քահ. Մարուքյանը։ Քարոզեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը «Արդ արձակեա՛ զծառայս քո Տէր, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո» բնաբանով։*

***

Փետրվարի 19-ին՝ Անառակի կիրակի.— *Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Նշան քահ. Թեյլերյանը։ Քարոզեց՝ տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը՝ «Զի այս որդի իմ մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ» բնաբանով։*

***

Փետրվարի 26-ին՝ Տնտեսի կիրակի.— *Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը, իսկ հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը քարոզեց «Տուր զհամար տնտեսութեան քո» բնաբանով։*

***

Մարտի 4-ին՝ ուրբաթ.— Երեկոյան ժամը 6-ին, վեհարանում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի նիստ։

***

Մարտի 5-ին՝ Դատավորի կիրակի.—Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը։ Քարոզեց հոգ. տ. Արսեն վրդ. Բերբերյանը՝ «Պարտ է յամենայն ժամ կալ նոցա յաղօթս և մի ձանձրանալ» մնաբանով։

***

Մարտի 9-ին՝ հինգշաբթի.— Առավոտյան, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ Մայր Աթոռի միաբան հոգ. տ. Արսեն վրդ. Բերբերյանը մեկնեց Ժնև (Շվեյցարիա)՝ հետևելու Ժնևի համալսարանի եկեղեցագիտական դասընթացներին։

***

Մարտի 11-ին՝ շաբաթ.— «Տօն ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի շարչարանաց և մտին ի Վիրապն»։ Օրվա տոնի առիթով փակ էր հոգևոր ճեմարանը։

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Նարեկ վրդ. Շաքարյանը և քարոզեց Լուսավորչի կյանքի և գործունեության մասին՝ «Գրիգոր սուրբ հայրապետ, որ զհաւատս ուսուցեր» բնաբանով։

Երեկոյան ժամը 6-ին, վեհարանում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի նիստ։

***

Մարտի 12-ին՝ Գալստյան կիրակի.— Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Մկրտիչ քահ. Մկրտչյանը։ Քարոզեց՝ տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը՝ «Կոչնատերն ահեղ, կոչողն ահաւոր, դատաւոր անաչառ, դատաստանն արդար, հրեշտակ անողորմ, դատեն զմեղաւորս» բնաբանով։

***

Գերագույն հոգևոր խորհուրդը իր 1965 թվականի սեպտեմբերի 7-ի հերթական նիստում արձանագրեց նախկին Մեսրոպ վարդապետ Պալյանի 1965 թ. ապրիլի 14 թվակիր դիմումնագիրը՝ հոգևոր ասպարեզից հրաժարվելու մասին։

Գերագույն հոգևոր խորհուրդը որոշեց խնդրել Վեհափառ Հայրապետին՝ կարգալույծ հռչակել իր ուխտը դրժող Մեսրոպ վարդապետ Պալյանին և նրան դասել ի շարս աշխարհականաց՝ Խորեն Պալյան իր նախկին անունով։

Վեհափառ Հայրապետը Իր 1965 սեպտեմբեր 10 թվակիր վճռով կարգալույծ հռչակեց նախկին Մեսրոպ վարդապետ Պալյանին։

***

Գերագույն հոգևոր խորհուրդը իր 1967 թ. փետր. 7 թվակիր հերթական նիստում արձանագրեց նախկին Գրիգոր վրդ. Եղիայանի 1966 թվական նոյեմբեր 14 թվակիր դիմումնագիրը՝ հոգևոր ասպարեզից հրաժարվելու մասին։

Գերագույն հոգևոր խորհուրդը որոշեց խնդրել Վեհափառ Հայրապետին՝ կարգալույծ հռչակել իր ուխտը դրժող Գրիգոր վրդ. Եղիայանին և նրան դասել ի շարս աշխարհականաց Հովհաննես Եղիայան իր նախկին անունով։

Վեհափառ Հայրապետը Իր մարտ 17 թվակիր հրամանով կարգալույծ հռչակեց նախկին Գրիգոր վրդ. Եղիայանին։